ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հոկտեմբերի 2014 **թ.** **N –Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԿՐԱՍՆՈԴԱՐ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել «Երևանի քաղաքապետարանի և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման միջև փոխգործակցության և համագործակցության մասին» համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԿՐԱՍՆՈԴԱՐ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Ռուսաստանի Դաշնության Կրասնոդար քաղաքի միջև երկկողմ համագործակցության հաստատման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը, մի շարք ոլորտներում համագործակցության ծավալումը, տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը, անհրաժեշտ եմ համարում 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Երևանի քաղաքապետարանի և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման միջև փոխգործակցության և համագործակցության մասին» համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

Հաշվի առնելով տնտեսական, հումանիտար և մշակութային համագործակցության ընդլայնման հարցում փոխադարձ համաձայնությունը, ինչպես նաև գործընկերային բարեկամական կապերը՝ վերոհիշյալ համաձայնագրով նախատեսվում է, որպեսզի Երևանի քաղաքապետարանը /Հայաստանի Հանրապետություն/ և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորը /Ռուսաստանի Դաշնություն/ համագործակցեն հետևյալ ուղղություններով.

1. առևտրա-տնտեսական ոլորտ
2. կրթության ոլորտ
3. մշակույթի ոլորտ
4. զբոսաշրջության ոլորտ
5. երիտասարդական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԿՐԱՍՆՈԴԱՐ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Երևանի քաղաքապետարանի և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման միջև փոխգործակցության և համագործակցության մասին» համաձայնագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԿՐԱՍՆՈԴԱՐ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևանի քաղաքապետարանի և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման միջև փոխգործակցության և համագործակցության մասին» համաձայնագրի հաստատման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի հոկտեմբերի ---ի
N-----Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Երևանի քաղաքապետարանի և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման միջև փոխգործակցության և համագործակցության մասին

ք.Երևան **«10»** 10 2014 **թ.**

Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Տարոն Անդրանիկի Մարգարյանի, որը գործում է Երևանի քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա, և Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման աշխատակազմի՝ ի դեմս Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման ղեկավար Վլադիմիր Լազարի Եվլանովի, որը գործում է Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կողմեր» և «մունիցիպալ միավորումներ», հաշվի առնելով սոցիալական, մշակութային և տնտեսական համագործակցության կարևորությունը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերն իրենց մտադրությունն են հայտնում քայլեր ձեռնարկել հավասարության և գործընկերության սկզբունքների հիման վրա համատեղ պայմաններ ստեղծել միջմունիցիպալ, սոցիալական, մշակութային և տնտեսական կապերի հաստատման և զարգացման համար, մասնավորապես՝

– իրականացնել փորձի փոխանակում կապված տարածքների զարգացման և բարեկարգման, բնակարանային-կոմունալ տնտեսության կատարելագործման և մունիցիպալ միավորումների գրավչության ձևավորման հարցերի հետ:

– իրականացնել փորձի փոխանակում տարածքային հանրային ինքնակառավարման ոլորտում՝ ներգրավելով մունիցիպալ միավորումների աշխատակազմերի մասնագետներին, ղեկավարներին և ակտիվիստներին,

– աջակցել առևտրատնտեսական ոլորտում հարաբերությունների զարգացմանը;

– երկու քաղաքներում անցկացվելիք մշակույթի, սոցիալ-տնտեսական զարգացման, սպորտի, առողջապահության, բնակարանային-կոմունալ տնտեսության հարցերին նվիրված կոնֆերանսներին, ցուցահանդեսներին, համաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին փոխադարձության հիմունքներով հրավիրել պատվիրակությունների;

– զարգացնել համագործակցությունը կրթության, գիտության և տեխնիկայի ոլորտներում և իրենց իրավասության շրջանակներում նպաստել այդ ճյուղերի զարգացմանը;

– զարգացնել ֆիզիկական կուլտուրան և սպորտը, ինչպես նաև քարոզել առողջ ապրելակերպը և սպորտով զբաղվելը երիտասարդության մեջ;

– աջակցություն ցուցաբերել մշակութային հաստատությունների, ինչպես նաև երկու քաղաքներում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների միջև երկարատև կապերի հաստատման հարցում, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ ստեղծել մասնագիտացված, սիրողական և մանկական խմբերի՝ փառատոներում, ցուցադրություններում, մրցույթներում մասնակցելու համար;

– առողջապահության, սպորտի, տուրիզմի և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցության զարգացման համար աջակցություն ցուցաբերել:

1.2. Կողմերի համագործակցությունը կիրականացվի Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գործող օրենսդրության համապատասխան:

1.3. Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը նախատեսում են աշխատանքային խմբերի և/կամ հանձնաժողովների ստեղծում՝ փոխգործակցության և համագործակցության ծրագրերի և/կամ պլանների մշակման համար:

2. Այլ դրույթներ

2.1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը կստանան Համաձայնագիրը ուժի մետ մտնելու համար անհրաժեշտ գործընթացների իրականացման մասին գրավոր տեղեկացումը:

2.2. Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի առաջարկել փոփոխություններ կատարել սույն համաձայնգրում կամ նրա հավելվածներում: Նշված փոփոխությունները և/կամ լրացումները ուժի մեջ են մտնում երկու կողմերի միջև ստորագրված համապատասխան արձանագրություններով ձևակերպվելուց հետո:

2.3. Սույն համաձայնագիրը կգործի այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացրել մյուս կողմին Համաձայնագրի կատարումը դադարացնելու իր մտադրության մասին: Սույն համաձայնագրի գործունեության դադարումը չի անդրադառնա նրա գործունեության ընթացքում սկսված և նախքան նրա գործունեության դադարումը անավարտ մնացած ծրագրերի և նախագծերի վրա:

2.4. Սույն Համաձայնագիրը ստորագրված է երեք օրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն լեզուներով:

3. Կողմերի ստորագրություններ

Երևանի քաղաքապետ	**Կրասնոդար քաղաք մունիցիպալ միավորման ղեկավար**
_____ /Տ.Ա.Մարգարյան /	**_____ /Վ.Լ.Եվլանով/**